

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ ԿԱՐԵՆԻ

ՀԱՅԱՐԱՏԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ը.00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտությունը և  
կառավարում» մասնագիտությունը ամբ տնտեսագիտություն և  
թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման ատենախոսություն

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսություն թեման տառվել է Հայ աստանի ազգային  
ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար

դոկտոր,

տնտեսագիտություն

արոճեսոր ՍԱՄԿԵԼ ՍԵՐԳԵՅԻ  
ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ  
դոկտոր

տնտեսագիտության

ՅԵՆՐԻԿ ՄԿՐՏՉԻ  
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

թեկնածու,

տնտեսագիտության

դոցենտ ՄԱՔՍԻՄ ԱՎԱՆԵՍԻ  
ԴԱՆԻԵԼՅԱՆ

Առաջատար կազմակերպության  
ԱՆՎԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈՐԱՆՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային արձագանքության  
կայանակու է 2016 թվականի հունիսի 6-ին, ժամը 10<sup>00</sup>-ին՝ Հայաստանի  
ազգային ազրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի  
տնտեսագիտության 002 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող., 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային  
ազրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի հունիսի 1-ին:

002 Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

դոցենտ Վ.Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունն ու հրատարակությունը.

Պարենային հիմնախնդրի կարգավորման հիմքում դարեր 2 արունակ  
ավանդաբար դրվել է հացահատիկի արտադրության զարգացումը:

Տնտեսական հարաբերությունների արմատական վերափոխումների պարագայում պարենային ապրանքների, այդ թվում՝ հացահատիկի, շուկայում ձեռք բերվեցին էական նվաճումներ, սակայն և հետագա զարգացման համար ձևավորվեցին նոր սպառնալիքներ: Գյուղատնտեսական արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման մակարդակի խիստ անկման, վարման գիտական համակարգի փլուզման, բնառեսուրսային ներուժի օգտագործման պայմանների վատթարացման և նյութական անբավարար ապահովվածության պարագայում 1988 թ. լավագույն տարվա նկատմամբ 2014-2015 թթ. արձանագրվեցին գյուղատնտեսության համախառն արտադրանքի, այդ թվում՝ հացահատիկի, բանջարեղենի, կարտոֆիլի, պտուղների, խաղողի, կաթի արտադրության ավելացման էական ձեռքբերումներ: 2000-2014 թթ. մանրածախ ապրանքառջանառության մեջ պարենի տեսակարար կշիռը 72-ից՝ 59-ի, իսկ հացահատիկինը՝ 42-ից՝ 23 %-ի իջնելու պարագայում պարենային ապրանքների ներքին ապրանքառջանառության ծավալը 302-ից հասավ 865, այդ թվում հացահատիկինը՝ 173-ից՝ 340 մլրդ. դրամի: Պարենային ապրանքների մեջ հացահատիկի տեսակարար կշիռը 57-ից իջավ 39 %-ի<sup>1,2,3,4</sup>:

Հացահատիկային տնտեսությունը առաջիկայում ևս կմնա ՀՀ տնտեսության, այդ թվում՝ ագրարային ոլորտի, զարգացման ռազմավարության գերխնդիրը: Մինչդեռ ձեռքբերումներն ամրագրված չեն ճյուղի հետագա զարգացման երաշխիքներով: Հետագոտություններով ապացուցված է, որ ձևավորված սպառնալիքներից առավել հատկանշական են հացահատիկի արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման մակարդակի անկումը, փլուզվող տեխնիկական պարկը, վարման գիտատեղեկատվական համակարգի և միջազգային նորամուծությունների ներդրման հնարավորությունների ցածր մակարդակը<sup>5</sup>, գիտական ապահովման ծառայությունների հնաճությունն ու ցածր արգասաբերությունը, հավելյալ արդյունքի վերաբերյալ տնտեսական լծակների անկատարությունը, տեղեկատվության խիստ պակասը, դրամատչելիության ու արժանահավատության ցածր մակարդակը, արտաքին շուկայից կախվածության բարձր մակարդակն և այլն: Դրանց լուծումների արդյունավետ տնտեսական մեխանիզմների առաջադրումը պայմանավորել է հետագոտության արդիականությունն ու հրատապությունը:

<sup>1</sup> Народное хозяйство АрмССР в 1988 г. – Ереван, 1989. – С. 179, 188, 192  
<sup>2</sup> Հայ աստանի վիճակագրական տարեգիրք. – Երևան, 2015, էջ 348-351  
<sup>3</sup> Հայ աստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. – Երևան, 2015, էջ 30, 37, 40-60, 105-114  
<sup>4</sup> Պարենային ապահովություն և աղքատություն. – Երևան, 2005, էջ 9-11, 39-45, 63-75, 97, 108-110  
<sup>5</sup> Վարդանյան Գ. Գիտելիքափոխանակումն տնտեսությունում: Հնարավորություններ և մարտահրավերներ // ՀՀ ԳԱԱ «Գիտություն». - Երևան, 2008, էջ 180-187, 330

**Հետազոտության նպատակն ու խնդիրները.**

Հետազոտության նպատակը հացահատիկի արտադրության ասպարեզում ձևավորված խոչընդոտների բացահայտումը, դրանց ծանրակշռության գնահատումը, ինչպես նաև նուժման մեխանիզմների առաջադրումն է:

ՀՀ Շիրակի մարզի օրինակով հետազոտության առաջնահերթություններում ներառվել են.

1. հացահատիկի արտադրության ավելացման և կայուն զարգացման հնարավորությունների բացահայտումն ու ներուժի գնահատումը,

2. ազգային անվտանգության և հացահատիկային տնտեսության զարգացման մարտահրավերների դիրքերից՝ 160-170 մլն դոլար արտադրության թույլ տարեկան 400-450 հազ. տոննա հացահատիկ ներկրելու կամ դրամի մասի՝ երկրում արտադրելու հնարավորությունների ու նպատակահարմարության այլընտրանքի հիմնավորումը,

3. 2020 և 2025 թթ. նախատեսվող ծրագրերի շրջանակներում հացահատիկի արտադրության համար լքյալ վարելահողերի մի մասի ներգրավման հնարավորությունների ու շահեկանության հիմնավորումը,

4. հացահատիկի «արտադրություն-սպառում» շղթայի բոլոր օղակների շահերի ներդաշնակեցումը,

5. գիտելիքահենք տնտեսության և ճյուղի վարման գիտական համակարգի դիրքերից հացահատիկի արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման համար պահանջվող ներդրումների նպատակահարմարության ու արդյունավետության հիմնավորումը,

6. սահմանամերձ, հեռավոր, բարձր և եռնային տնտեսություններում հողօգտագործման և հացահատիկի արտադրությանը խթանող ֆինանսատնտեսական նոր ազդակարողությունների անհրաժեշտության հիմնավորումն և այլն:

**Հետազոտման օբյեկտը և առարկան.**

Հետազոտության օբյեկտը՝ հացահատիկի և հացամթերային համալիրի շղթան է: Հետազոտության առարկան՝ հացահատիկի ինքնաբավության բարձրացման և մատչելիության ապահովման հիմնախնդրի լուծման չօգտագործված ռեսուրսների բացահայտումն է ու դրանց գործողության մեջ դնելու նպատակահարմարության, հնարավորությունների ու մեխանիզմների առաջադրումը:

**Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը.**

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել հացահատիկային տնտեսությանն առնչվող հայ և օտարազգի հետազոտողների գիտական ընդհանրացումները, կարգավորման իրավական ակտերը, տնտեսագիտության դասականների գիտական ժառանգությունը, Համաշխարհային առևտրային կազմակերպության՝ հացահատիկի արտադրության, սպառման, միջազգային առևտրի փաստացի գների և կանխատեսումների նյութերը, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ-ի վիճակագրական տեղեկատվությունը, գիտահետազոտական և փորձարարական

կազմակերպությանը, տնտեսագետ և այլ գիտնականների աշխատությունները, ՀՀ կառավարության որոշումներն ու ՀՀ-ում իրականացված նախագծերի տվյալները, օրենսդրական ակտերն և այլն:

**Աշխատանքի հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը.**

Հետազոտության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքներից որպես գիտական նորույթ կարևորվում են հետևյալները.

1. մշակվել է հացահատիկի ինքնաբավությունը կենսաապահովման նորմայով կամ սպառման փաստացի մակարդակով հաշվարկելու մեթոդաբանություն,

2. ծիրակի մարզի օրինակով բացահայտվել է մանրապրանքային հացահատիկային տնտեսությունների արտադրության կենտրոնացման ու համակենտրոնացման օբյեկտիվ անհրաժեշտությունն ու տնտեսական բարձր արդյունավետությունը,

3. հացամթերային ենթահամալիրի բոլոր օղակների շահերի ներդաշնակեցման նպատակով առաջարկվել են ամբողջական շահույթի արդարացի բաշխման մեթոդաբանություն և իրագործման մեխանիզմներ,

4. վիճակագրական խմբավորումների տվյալներով բացահայտվել են հացահատիկի տնտեսական արդյունավետության վրա ազդող գործոնների էականությունը և գնահատվել լրացուցիչ ծախսերի ու արդյունքների արժեքային ռեգրեսիվ կախվածության համարժեք հարաբերակցությունը:

**Հետազոտության արդյունքների կիրառական նշանակությունը:**

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից՝ հացահատիկի արտադրության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման, պետական կարգավորման ամբողջական համակարգ ձևավորելու, ագրոարդյունաբերական փոխշահավետ ինտեգրացիայի, հացահատիկային տնտեսության վարման գիտական համակարգի ներդրման, ցանքատարածքների կառուցվածքի օպտիմալացման, ագրարային գիտակրթական համակարգի արդիականացման, գիտափորձարարական կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների շահերի ներդաշնակեցման համար և այլն:

**Հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները.**

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են ՀՀ և միջազգային գիտական պարբերականներում, առանձին դրույթները քննարկված են Շիրակի մարզի ԳԱՄԿ-ի և Գյուլմրիի սելեկցիոն կայանի գիտաարտադրական խորհրդակցություններում:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոպարենային համակարգի

Եկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման, Ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնների համատեղ նիստում:

Աշխատանքը շարադրված է 137 էջի վրա: Բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Առաջաբանում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը և հրատարակությունը, գնահատվել է հետազոտվածության աստիճանը, տրվել է հետազոտության առարկան, օբյեկտը, նպատակն ու խնդիրները, ներկայացվել է աշխատանքի տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը:

**Ատենախոսության առաջին՝ «Հացահատիկի արտադրության գաղափարն և արդյունավետության բարձրացման տեսական հիմունքներն ու մեթոդաբանությունը» գլխում** համակարգվել և ըստ ուղղվածության դասակարգվել են հացահատիկի տեխնիկատեխնոլոգիական, ագրարային տնտեսագիտության և շուկայաբանության վերաբերյալ կատարված գիտական հետազոտությունները, որոնք անանց արժեք են նաև այսօր:

Մասնավորապես վկայակոչված են հայ ժողովրդի հազարամյա պատմամշակույթի կարևոր բաղադրիչի վկայագիր՝ ՀՀ-ում հացահատիկի վերաբերյալ հայ և օտարագի երախտավորների (Ա.Քսենոֆոն)<sup>6</sup>, պեղումների բրածո մնացորդներով դրախտության հավաստագրողների (Կ.Ղաֆարյան)<sup>7</sup>, ժամանակակից սելեկցիայի գիտական հիմունքների հիմնադիր Ն.Ի. Վալիլովի գիտական հարուստ ժառանգությունը: Հիմնականում նրան է պատկանում Հայաստանը մշակովի բույսերի համաշխարհային 7 կենտրոններից (հատկապես ցորենի, գարու հայրենիք) մեկը հռչակելը (ՀՍՀ, հ. 11, Եր. 1985, էջ 299): Հիշատակման արժանի է Պ. Ղանդիլյանի<sup>8</sup>, Գ. Աղաջանյանի<sup>9</sup>, Բ. Գարասեֆերյանի<sup>10</sup>, Գ. Մելքումյանի<sup>11</sup> ժառանգությունը:

Հետազոտությունների շարքում 1960-ական թվականներից սկսվեցին աշխուժանալ «տնտեսությունը պետք է լինի

<sup>6</sup> Քսենոֆոն: Հայաստանի սովետական հանրագիտարան, հ. 2. - Եր. 1976, էջ 700-701

<sup>7</sup> Ղաֆարյան Կ.Գ. Կարմիր բլուրի սեպագիր արձանագրությունները: Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի, 1937, ՀՍՀ, հ.5. - Եր, 1979, էջ 331-332

<sup>8</sup> Ղանդիլյան Պ.Ա. Կենսամատենագիտություն. - Երևան, 2000, էջ 23-27

<sup>9</sup> Աղաջանյան Գ.Խ. Ցորենի բարձր բերքի ագրոտեխնիկայի միջանկյալ հարցերի մասին. Առանձնատիպ ՀՍՍՌ-ԳԱ 1951, Հ 5, № 8 «Տեղեկագիր», - էջ 697-709

<sup>10</sup> Գարասեֆերյան Բ.Մ. Հայաստանում մշակվող ցորենի տեղական սորտերը. - Երևան: Հայ պետհրատ, 1955, - 128 էջ

<sup>11</sup> Մելքումյան Գ.Հ., Ավագյան Գ.Ա. և Մարգարյան Ա.Գ. Հայկական ՍՍՌ-ում շրջանացված ցորենի սորտերի ագրոբիոլոգիական բնութագիրը և նրանց միկրոշրջանացումը. - Երևան: Գյուղ. մին. հրատ., 1959. - 205 էջ

արդյունավետ» վերնաշենքային կարգախոսից բխող հրապարակու մները: Սակայն, որքան էլ կատարելագործվեցին արտադրության վարման տեխնոլոգիան, ցանքաշրջանառության տեսու թյուններն ու արակտիկան, բարձրացվեցին արտադրության կենտրոնացման մակարդակը, տնտեսավարման համակարգը, այնուհանդերձ հացահատիկի ցածր բերքատու սորտերը, ինտենսիվության ցածր մակարդակը, ցածր բերրի հողերի վրա նրա մշակության պարտադրանքը մնում էին հացահատիկի տնտեսական ցածր արդյունավետության հիմնական պատճառները: Արտադրության ցածր արդյունավետության պատճառահետևանքային կապը ընդունված չէր տնտեսավարման տնտեսական հենքի վրա դիտարկելը: Մինչդեռ այն պայմանավորված էր արտադրանքի արտադրության, պետական «գնումների» ծավալների, ցածր գների, տնտեսական բոլոր ցուցանիշների կանոնակարգման, հասցեագրման և ժամկետավորման պարտադրանքով, արտադրության վերջնական արդյունքի համար տնտեսական պատասխանատվության բացակայությամբ:

Հացահատիկի էկոնոմիկայի, շուկայի կարգավորման հիմնահարցերը նորովի են լուսաբանված Ս. Ավետիսյանի, Գ. Դավթյանի, Լ. Մարգարյանի, Ա. Բայադյանի, Կ. Գրիգորյանի, Ա. Ոսկանյանի, Է. Ղազարյանի, Զ. Մամիկոնյանի, Զ. Ծախեցյանի, Ռ. Կարախանյանի աշխատություններում: Դրանցում արտացոլված են արտադրության վարման գիտական համակարգի ներդրման, կենտրոնացման և համակենտրոնացման, արտաքին կախվածության մեղմացման, արտադրության չափերի օպտիմալացման հարցերը: Գիտաարտադրական դիրքերից հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ներկայացված են նաև Ա. Աղամբեկյանի, Ա. Ալտուխովի, Ա. Կարմանովայի, Ն. Վերեջագինի, Ռ. Աբդրաշիդովի և այլ հետազոտողների գիտական եզրահանգումները:

ՀՀ և Շիրակի մարզի մակրոտնտեսական ցուցանիշների 2005-2014 թթ. համարությունամբ բացահայտված է, որ չնայած վարելահողերի, ցանքատարածությունների, նվազագույն սպառողական և պարենային զամբյուղի, բնակչության ծախսերի, մանրածախ՝ այդ թվում պարենային ապրանքների, արտաքին առևտրի կառուցվածքում տարեցտարի փոքրանում է հացահատիկի մասնաբաժինը, այնուհանդերձ, պահպանվում է նրան շանակալից դերը: Սպառված սննդի 2,2 տրիլյոն կկալ է ներգետնիկայում այն զբաղեցնում է 60,7%, դրական և բացասական հետևանքներով հանդերձ: Դրանով հանդերձ, հացահատիկին բաժին է ընկնում սպառողական և պարենային զամբյուղների արժեքի և սպառողական ծախսերի ընդամենը՝ 8,2, 21,8, և 9,9 %-ը, որը 2005-2014 թթ. բնակչության սպառողական և պարենային զամբյուղների, սպառողական ծախսերի 3,7, 3,4 և 2,6 անգամ աճի պարագայում ավելացել էր ընդամենը 43 %-ով:

Այդ ցուցանիշներն առավել ծանրակշիռ են Շիրակի մարզում, որտեղ հացահատիկին բաժին է ընկնում արտադրված արտադրանքի

Էներգետիկայի 67, սննդի Էներգետիկայի նորմատիվային պահանջի՝ 41 %-ը, իսկ ինքնաբավությունը եռակի գերազանցում է նորմատիվային սպառման մակարդակը:

Այս հանգամանքը ներկայումս շահեկան է մարզի համար, որը մակրոտնտեսական բազում ցուցանիշներով (մեկ շնչի հաշվով՝ արդյունաբերական արտադրանքի, մանրածախ առևտրի, ամսական աշխատավարձի, արտաքին առևտրի) բազմակի գիջում, իսկ ներկրումների, գործազրկության, աղքատության մակարդակով՝ գերազանցում է ՀՀ մակարդակը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Սոցիալ-տնտեսական տեղադրության և պարենային անվտանգության մի քանի ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում և Շիրակի մարզում

| Ցուցանիշներ                 |   | Չափի միավոր       | ՀՀ-ում |      |      | Շիրակի մարզում |      |      |
|-----------------------------|---|-------------------|--------|------|------|----------------|------|------|
|                             |   |                   | 2005   | 2007 | 2014 | 2005           | 2007 | 2014 |
| 1                           | Բնակչությունը                                     | հազ.մարդ          | 3219   | 3230 | 3011 | 281            | 282  | 246  |
| 2                           | Արտադրանքը  | արդյունաբերության | 651    | 766  | 1291 | 13             | 16   | 49   |
|                             |   | գյուղատնտեսության | 493    | 633  | 993  | 49             | 63   | 109  |
|                             |   | ընդամենը          | 1144   | 1399 | 2284 | 62             | 79   | 158  |
|                             | Գյուղ. արտադրանքի տնտեսարար կշիռը                 | %                 | 43     | 45   | 44   | 79             | 80   | 69   |
| 3                           | 1 շնչի հաշվով արտադրանքը՝                         | հազ.դրամ          | 202    | 237  | 428  | 46             | 57   | 199  |
|                             | • արդյունաբերության                               |                   |        |      |      |                |      |      |
|                             | • գյուղատնտեսության                               | 153               | 196    | 330  | 174  | 223            | 443  |      |
|                             | • Մանրածախ առևտրի                                 | հազ.դրամ          | 276    | 294  | 486  | 59             | 66   | 151  |
| • Միջին ամսական աշխատավարձը | հազ.դրամ  | 52                | 74     | 158  | 38   | 55             | 116  |      |
| 4                           | Արտաքին ապրանքաշրջանառությունը                    | Արտահանում        | 950    | 1127 | 1522 | 1,6            | 4,9  | 4,8  |
|                             |   | Ներմուծում        | 1768   | 3066 | 4182 | 20,0           | 31,2 | 44,3 |
|                             |   | Ընդամենը          | 2718   | 4193 | 5704 | 21,6           | 36,1 | 49,1 |
|                             | Նույնը մեկ շնչի հաշվով                            | US\$              | 844    | 1298 | 1894 | 77             | 128  | 199  |
|                             | Ներմուծումների տնտեսարար կշիռը արտաքին առևտրի մեջ | %                 | 66     | 73   | 73   | 93             | 86   | 90   |
| 5                           | Գործազուրկների տնտեսարար կշիռը                    | %                 | 31,2   | 28,4 | 17,6 | 19             | 15   | 21   |
| 6                           | Աղքատ բնակչության տնտեսարար կշիռը                 | %                 | 29,8   | 25,0 | 30,0 | 42,5           | 32,1 | 44,2 |
| 7                           | Մեկ շնչի սպառած սննդի օրական Էներգիան             | կկալ              | 2124   | 2267 | 2043 | 2159           | 2218 | 2038 |

Աղբյուրը՝ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով. ՀՀ ԱՎԾ. – Եր., 2006, Էջ 15, 25, 51, 97-98, 255, - Եր., 2008, Էջ 17, 25, 36, 249, - Եր. 2015, Էջ 26-44, 81, 102, 208:  
Պարենային ապահովություն և աղքատություն. ՀՀ ԱՎԾ. - Եր. 2009, 2015, «Պարենի մատչելիություն» բաժինը: ՀՀ վիճ. տարեգիրք. - Եր. 2015, Էջ 11, 14-16, 48-50, 84-98, 289-309, 346-365, 439-463

Կորցնելով արդյունաբերական տնտեսության վաղեմի փառքը մարզի 230 մլրդ. դրամ ՀՆԱ-ի մեջ արդյունաբերության մասնաբաժինը 2014 թ. հասնում էր 21,3, գյուղատնտեսությանը՝ 47,4, շինարարության և տրանսպորտինը՝ 5,6, առևտրինը՝ 16,7 և ծառայություններինը՝ 8,7%:

ՀՀ-ում և, հատկապես, տնտեսապես առավել աղքատ շրջաններում, որոնցից է նաև Շիրակի մարզը, հացահատիկի տնտեսական դերի ներկայացումը, դրա հետագա ավելացման և արդյունավետության բարձրացման գերխնդիրների լուծումների առաջադրումը մնում է առաջնային նպատակ: Սակայն «ինքը իրենով» հացահատիկը չի կարող լուծել իր հիմնախնդիրները: Ինտենսիվ մշակության գոտիներում նրա մշակությունը դրա հաստատումն է, ուր շարահերկերը, խաղողը, պտուղը 1 հա-ից ապահովում են 8-10 հա հացահատիկի նոր արդյունքին համարժեք արտադրանք:

**Առևտրականության երկրորդ՝ «Հացահատիկի արտադրության ներկավիճակը և գարգացումը ՀՀ-ում և Շիրակի մարզում» գլխում** հացահատիկի արտադրությունը դիտարկվել է համառոտաբար և տարածքային ընդհանրությունների և առանձնահատկությունների, ներկրումների շահեկանության և երկրում արտադրելու այլ ընտրանքի համատեքստում:

Հացահատիկի համառոտաբար և տարածքային արտադրությունը 2012-2014 թթ. 2,3-ից հասել էր 2,4 մլրդ տոննայի: Բնակչության տարեկան 100 մլն-ով և հացահատիկի արտադրության շուրջ 30 մլն տոննայով աճի պայմաններում մեկ շնչի հաշվով արտադրությունը պահպանվում է 340 կգ-ի<sup>12</sup> շրջանակներում:

Անկախ պետությունների համագործակցության երկրների շարքում 600-638 հազ. տոննա ծավալով, ինչպես նաև մեկ շնչի հաշվով 200-210 կգ հացահատիկի արտադրությամբ ՀՀ-ը 2010-2014 թթ. զբաղեցնում էր նախավերջին տեղը (Ուկրաինա՝ 1400-1500, Ղազախստան (1100-1600), Բելոռուս (800-1000), Ռուսաստան, Մոլդովա (700-800), Ադրբեջան, Ղրղզստան (250-330), Հայաստան, Ուզբեկստան, Տաջիկստան (150-250): Հետևապես, արտաքին կախվածության մարտահրավերները կմնան նաև առաջիկայում, մանավանդ որ մեկ շնչի հաշվով արտադրված հացահատիկը ամբողջովին պարենային չէ: 2014 թ. ՀՀ-ում մեկ շնչի հաշվով սպառված 187 կգ հացահատիկը ամբողջական 530 կգ առաջարկի (190 կգ պահուստ, 193 կգ՝ արտադրություն, 147 կգ՝ ներմուծում) մեջ պարենայինը զբաղեցնում էր սոսկ 35%, թեև այստեղ հարաբերական են «պարենային» և «ոչ պարենային» ձևակերպումները: Մեր կարծիքով, պարենային է նաև անասնամթերքի արտադրության համար օգտագործվող 270-300 հազ. տոննա հացահատիկը:

<sup>12</sup> ՏԱՕ-ի, Արժույթի միջազգային հիմնադրամի, ՏՀԶԿ-ի, Եվրամիության, բնակչության վերաբերյալ տեղեկատվությունների բյուրոյի, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի, ՀԲ-ի և ՀՀ ԱՎԾ-ի հրատարակումները

Հացահատիկի արտադրության զարգացման հիմնախնդիրները այս տեղ քննարկված են.

1. հացահատիկի ամբողջական և տարածքային հաշվեկշռվածության,
2. գյուղատնտեսական ինտենսիվ զարգացման տարածաշրջաններում հացահատիկի արտադրությանը միավոր հողատարածքից առավելագույն ավելացված արժեք ապահովելու նպատակահարմարության այլընտրանքի,
3. հացահատիկի արտադրության տատանումների մեղմացման,
4. արտադրության վարման գիտական համակարգի գործունեության համակողմանիության,
5. արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման մակարդակի բարձրացման,
6. արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման,
7. ինքնաբավության մակարդակի բարձրացման և արտաքին կախվածության մեղմացման,
8. հացահատիկի շուկայում արտադրության-սպառում շղթայի բոլոր օղակների շահերի ներդրումնակեցման,
9. սննդի օրաբաժնում հացահատիկի տնտեսարար կշիռի նվազեցման հնարավորությունների որոնման, շահեկանության և իրատեսության դիրքերից:

Տնտեսական հնարավորությունների էական վառարացման պարագայում անգամ 1988-2014 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի 234 մլրդ. դրամով կամ 31 %-ով հավելածը խոսում է տնտեսավարման նոր ձևի նաև ուժեղ կողմերի մասին:

Համահունչ են նաև հացահատիկի արտադրության զարգացման ցուցանիշները, որի համախառն արտադրանքը այդ տարիներին 373-ից հասավ 590, 2015 թ.՝ 638 հազ. տոննայի կամ հավելածը կազմեց 217 և 265 հազ. տոննա (58 և 71 %): Առաջանցիկ բարձր տեմպերի շնորհիվ հացահատիկի տնտեսարար կշիռը համախառն արտադրանքի մեջ 7,9-ից հասավ 9,7 %-ի (հավելած՝ 1,8 %): Ներմուծված պարենամթերքների էներգետիկայի կառուցվածքում ունեցած դիրքով այն անմրցակից է:

Աղյուսակ 2

Հացահատիկային մշակաբույսերի տարածության կառուցվածքային տեղադրության, բերքատվության և համախառն բերքի դինամիկան 33-

ում

| Մշակաբույսեր                 | Ցանքատարածությունը, հազ. հա |      |       | Ցանքատարածության կառուցվածքը, % |      |      | Մեկ հա-ի բերքատվությունը, ց |      |      | Համախառն բերքը, հազ.տ |      |      |
|------------------------------|-----------------------------|------|-------|---------------------------------|------|------|-----------------------------|------|------|-----------------------|------|------|
|                              | 1995                        | 2005 | 2014  | 1995                            | 2005 | 2014 | 1995                        | 2005 | 2014 | 1995                  | 2005 | 2014 |
| Աշնանացան և գարնանացան ցորեն | 88                          | 128  | 106,6 | 50,3                            | 60,9 | 56,7 | 17,0                        | 20,2 | 31,7 | 150                   | 258  | 338  |
| Աշնանացան և գարնանացան գարի  | 68                          | 65   | 67,6  | 38,9                            | 30,9 | 36,0 | 12,6                        | 17,0 | 29,7 | 86                    | 111  | 200  |
| Եգիպտացորենի հատիկ           | 1,8                         | 3,1  | 2,8   | 1,0                             | 1,5  | 1,5  | 23,1                        | 44,7 | 71,8 | 4,2                   | 14,1 | 20,1 |

|                     |      |     |     |     |     |     |      |      |      |     |     |      |
|---------------------|------|-----|-----|-----|-----|-----|------|------|------|-----|-----|------|
| Վարսակ              | 0,8  | 0,6 | 2,6 | 0,5 | 0,3 | 1,4 | 9,9  | 11,1 | 30,1 | 0,8 | 0,7 | 7,0  |
| Հաճար               | 6,4  | 5,0 | 7,0 | 3,6 | 2,4 | 3,7 | 13,1 | 14,5 | 26,1 | 8,4 | 7,3 | 18,2 |
| Այլ                 | 10,0 | 8,3 | 1,4 | 5,7 | 4,0 | 0,7 | x    | x    | x    | 4,6 | 4,9 | 6,7  |
| Ընդամենը,<br>միջինը | 175  | 210 | 189 | 100 | 100 | 100 | 15,2 | 19,4 | 31,8 | 254 | 396 | 590  |
| Աճը, %              | 100  | 120 | 107 | x   | x   | x   | 100  | 127  | 202  | 100 | 156 | 232  |

Աղբյուրը 1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ԱՎՃ. - Եր., 2001, էջ 267-275;,  
2006, էջ 303-307; 2015, էջ 298-299

2. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և  
համախառն բերքը: ՀՀ ԱՎՃ. - Եր., 1996-2015 թթ. հրատարակություններ

Հացահատիկի արտադրությունը ՀՀ-ում (1995-2014 թթ.) ավելացել է ցանքատարածությունների ավելացման, կառուցվածքային տեղաշարժերի և որամենակարևորն է՝ բերքատվության բարձրացման հաշվին, ընդ որում, 336 հազ. տ հավելածից 305 հազ. տ կամ 91 %-ը բաժին է ընկնում բերքատվության բարձրացմանը:

Թեև հացահատիկի տեսականին լայն է, սակայն գլխավոր դերակատարները մնում են աշնանացան և գարնանացան ցորենն ու գարին, որոնց բաժին է ընկնում տարածքների մինչև 92,8, որտեղ ցորենին՝ շուրջ 61 %: Անցած ժամանակաշրջանում միջին բերքատվությունը աճել է 16,6 ց-ով կամ կրկնակի, այդ թվում գարունը՝ 135, եգիպտացորենինը՝ 205, վարսակինը՝ 204, հաճարինը՝ 99 %-ով (աղյուցակ 2):

Հացահատիկի բերքատվության բարձրացման գործոնների շարքում կարևոր են ցածր բերրի հողերից հրաժարումը (Լոռի, Կոտայք, Վայոց ձոր) և բարձր բերքատու սերմերի օգտագործումը, մինչդեռ կրճատվել են ոռոգվող տարածքներն ու պարարտանյութերի օգտագործումը:

ՀՀ հացահատիկի արտադրության փոփոխությունների տարածքային գնահատումները վկայում են, որ դեռևս մեծ են չօգտագործված ռեսուրսները, սակայն ոչ նպատակային օգտագործվող վարելահողերի վերաբերյալ տվյալները շատ բան չեն կարող տալ, քանի դեռ անհայտ են դրանց տնտեսական պիտանիությունն ու հացահատիկի տակ դնելու շահեկանությունը: Վիճակագրական պաշտոնական տվյալների ուսումնասիրությունները վկայում են, որ Էապես տարբեր են 96 հազ. հավարելահողերի ոչ նպատակային օգտագործման փաստարկները, տնտեսական հնարավորություններն ու հիմնավորվածությունը:

Հացահատիկի էկոնոմիկայի, անգամ համակողմանի, հետազոտումը ամբողջական և հետևողական չի լինի շուկայից անկախ դիտարկելը: Տարածությունների, բերքատվության և համախառն բերքի կարգավորումը, ուղղակի և անուղղակի ձևերով, պայմանավորված է պահանջարկի և առաջարկի, ինքնաբավության, շուկայի տարողության, կառուցվածքի, ազգային անվտանգության, գների մակարդակի և կառուցվածքի տնտեսական հիմնավորվածության, տնտեսության վարման համակարգի գիտելիքա-հենքության, վարվող տնտեսական քաղաքականության հեռատեսա-

կանոն թյան, տնտեսական ստվերայնության, ֆինանսատնտեսական իրավիճակով:

Անելիքները մեծ են հացահատիկի ներկրումների ծավալների քվոտավորման, մանրածախ և մեծածախ առևտրի գների համարժեքության, հացահատիկի տեխնիկական պարկի, պարարտանյութերի, վառելիքի, ոռոգման ջրի գների համարժեքության ասպարեզում:

Աղյուսակ 3-ից հանգում ենք.

1. Սպառման փաստացի մակարդակները մշտապես գերազանցել են կենսապահովման տարեկան 128 կգ նորման: 1988-2014 թթ. նորմատիվային պահանջարկի 59 հազ. տոննայով կամ 18 %-ով կրճատումը պայմանավորված է բնակչության 447 հազարով կամ 13 %-ով կրճատմամբ:

Հացահատիկի շուկայի իրավիճակի փոփոխության միտումները ՀՀ-ում

| Տարիները | Պահանջարկը ըստ 2232 կկալ/օր նորմայի, հազ.տ | Արտադրության թյուր, հազ.տ | Ներմուծումներ, հազ.տ | Շուկայի տարողունակ, հազ.տ | Փաստացի սպառումը (ըստ պարեն. հաշվեկշռի) |                 | Շուկայի տարողության նկատմամբ |                 | Սպառումը նորմայի նկատմամբ, % | Ներկրման գումարը, մլն US\$ | 1 կգ-ի գինը, դրամ   |          |
|----------|--|---------------------------|----------------------|---------------------------|---|-----------------|------------------------------|-----------------|------------------------------|----------------------------|---------------------|----------|
|          |  |                           |                      |                           | 1 շնչի հաշվով, կգ                       | Համախառն, հազ.տ | Արտադրության թյուր, %        | Ներկրումները, % |                              |                            | Մանրածախի (ալյուրի) | Ներկրածի |
| 1988     | 445  | 373                       | 1170                 | 1543                      | 131                                     | 452             | 24,2                         | 75,8            | 102                          | 432                        | 141*                | 154*     |
| 2000     | 414  | 225                       | 431                  | 656                       | 158                                     | 508             | 34,3                         | 65,7            | 123                          | 74,4                       | 255                 | 93       |
| 2005     | 415  | 396                       | 340                  | 736                       | 160                                     | 515             | 53,8                         | 46,2            | 125                          | 70,2                       | 216                 | 94,5     |
| 2010     | 421  | 326                       | 361                  | 687                       | 182                                     | 593             | 47,4                         | 52,6            | 142                          | 134,3                      | 303                 | 138      |
| 2014     | 386  | 590                       | 442                  | 1032                      | 187                                     | 563             | 57,2                         | 42,8            | 146                          | 163                        | 419                 | 154      |

12

Աղբյուրը՝ Սպառողական շուկան ՀՀ-ում 1995-2001 թթ., Երևան, 2002, էջ 32-41:

ՀՀ արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի) 2009-2013 թթ., ՀՀ ԱՎԾ, 2015 թ., էջ 39:

Պարենային ապահովություն և աղքատություն (գներ և սակագներ բաժինը), Գյուղ. մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը, ՀՀ ԱՎԾ-ի համապատասխան տարիների նյութերը:

Народное хозяйство Арм.ССР в 1988 г. – Ер. 1989. – С. 60., գյուղ. նախարարության պաշտոնական տվյալները:

\* 2014 թ. գներով

2. Շուկայի տարողության աճման և կառուցվածքային տեղաշարժերի ուժեղ կողմը արտաքին կախվածության էական նվազումն է: Սեփական արտադրության տեսակարար կշիռը 24,2-ից 57,2 %-ի հասցնելը 2014 թ. համազոր էր 217 հազ. տ հացահատիկի: 1988-2014 թթ. երկիրը թոթափեց 728 հազ. տ հացահատիկ ներկրելու հոգսից, որը 2014 թ. գներով հավասարազոր էր 112 մլրդ դրամի:

3. Ներմուծումների համար արտարժույթը 1988-2014 թթ. նվազեց 269 մլն US \$-ով:

4. Մանրածախ գների աճը ուղեկցվեց գյուղացիական տնտեսության ներքին գնվող հացահատիկի մեծածախ գնի աճով, որոնք այնքան էլ համահունչ չեն: 2002-2014 թթ. ցորենի 1 կգ-ի գինը 79-ից հասավ 142 (աճը 63 դրամ կամ 79 %), մինչդեռ առաջին տեսակի հացինը 203-ից՝ 397 դրամի (աճը՝ 194 դրամ կամ 95 %): Հացամթերքի մանրածախ գնի կառուցվածքում հացահատիկի տեսակարար կշիռը 39,8-ից իջավ 35,9 %-ի: Գների հարաբերակցության համարժեքությունը առավել վատթարացել է գյուղին մատակարարվող արտադրամիջոցների գծով, որոնք վերջին տասնամյակում պարարտանյութերի, թունանյութերի գծով բարձրացել են 70-130 %-ով, ոռոգման ջրինը՝ 2,7 անգամ: Եթե առաջինները պայմանավորված են արտաքին շուկայի իրավիճակով, կամ սովերային ներկրումներով, ապա նույնը չի կարելի ասել ոռոգման ջրի վերաբերյալ, որի թանկացումից գյուղական տնտեսության ներքին տարեկան կորցնում են 10 մլրդ դրամ: Հետևապես, հացահատիկի գնի կարգավորումը գնային քաղաքականության գերիխնդիր է:

Հացահատիկի շուկայում կարևորվել է նաև սպառված սննդամթերքի էներգետիկայում զբաղեցրած դիրքը, որտեղ Շիրակի մարզը ներկայացված է ուժեղ և թույլ կողմերով:

Շիրակի մարզում հացահատիկի էկոնոմիկայի և շուկայի հիմնախնդիրներն, գրեթե ամբողջովին, համահունչ են միջին հանրապետականին: Սակայն, այստեղ այն ունի սոցիալական խնդիրների լուծման ավելի մեծ առաքելություն, քանի որ աղքատության մակարդակը առավել ագույնն, իսկ հացահատիկը՝ առավել էժան պարենամթերքն է:

2001-2014 թթ. հացահատիկի տարածությունները Շիրակի մարզում կազմում էին 41,4-43,9 հազ. հա, կամ ՀՀ հացահատիկի տարածքի 21,6-23,2 %: Համախառն բերքի կառուցվածքում մարզի մասնաբաժինը տատանվում էր 18,2-20,5 %-ի շրջանակներում:

Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ հացահատիկի տեսակարար կշիռը 3,4 %-ով անկման պարագայում հացահատիկի արտադրության ծավալներն աճեցին 7,7 մլրդ դրամով կամ 56 %-ով (աղյուսակ 4): Նկատի ունենալով անասնապահական մթերքների արտադրության մեջ ունեցած էական դերակատարումը, համախառն արտադրանքի արժեքում հացահատիկին պետք է ավելի մեծ առաքելություն վերագրվի, սակայն շուկան կշեռքի նժարին է դնում, առաջին հերթին, 1 հա-ի հաշվով առավել բարձր ավելացրած արժեք ապահովող մշակաբույսերը: Մինչդեռ մարզում հացահատիկը իր 8-9 մլն կկալ և 0,4 մլն դրամ համախառն արտադրանքով անմրցակից է 15-18 մլն կկալ էներգետիկ համարժեքով և 3-4 անգամ ավել հասույթ ապահովող կարտոֆիլին, կաղամբին, գազարին: Սակայն մրցակցությունը շուկայում

Կայ ում հարատև չէ, քանի որ, եթե կարտոֆիլի շուկան, առանց արտահանման երաշխիքի, այսօր ունի գերարտադրության, ապա հացահատիկի շուկան՝ համալրման գերխնդիր:

Հացահատիկի տեղը ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ  
(առանց անավարտարտադրող թյան ծախսերի)

14

| Արտադրանքի անվանումը                       | Արտադրանքների միջին տարեկան արտադրողությունը, հազ.տ |           |           |           | Մեկ տ-ի 2014 թ. համադրելի գինը, հազ. դրամ | Համախառն արտադրանքը համադրելի գներով, մլրդ դրամ |           |           |           | Համախառն արտադրանքի կառուցվածքը, % |           |           |           |
|--|---|-----------|-----------|-----------|---|---|-----------|-----------|-----------|------------------------------------|-----------|-----------|-----------|
|  | 2001-2003   | 2004-2006 | 2007-2009 | 2011-2014 |   | 2001-2003                                       | 2004-2006 | 2007-2009 | 2011-2014 | 2001-2003                          | 2004-2006 | 2007-2009 | 2011-2014 |
| Հացահատիկ                                  | 72,2  | 56,3      | 89,2      | 113       | 190                                       | 13,7  | 10,7      | 16,9      | 21,4      | 25,5                               | 19,9      | 21,1      | 22,1      |
| Բանջարեղեն                                 | 30,2  | 29,2      | 31,2      | 44        | 162                                       | 4,9   | 4,7       | 5,0       | 7,1       | 9,1                                | 8,6       | 6,2       | 7,3       |
| Կարտոֆիլ                                   | 23,2  | 63,1      | 87,5      | 101       | 171                                       | 3,4   | 10,7      | 14,4      | 17,1      | 6,3                                | 19,7      | 18,0      | 17,7      |
| Պտուղ                                      | 0,9   | 2,4       | 2,8       | 6,6       | 421                                       | 0,4   | 1,0       | 1,1       | 2,8       | 0,7                                | 1,8       | 1,4       | 2,9       |
| <b>Ընդամենը բուսաբուծության արտադրանք</b>  |   |           |           |           |   | 22,4  | 27,1      | 37,4      | 48,4      | 41,7                               | 50,0      | 46,7      | 50,0      |
| Բուսաբուծության համախառն արտադրանքի աճը, % |   |           |           |           |   | 100   | 120       | 166       | 216       | x                                  | x         | x         | x         |
| Կաթ  | 70,8  | 60,4      | 97,4      | 104       | 170                                       | 12,0  | 10,3      | 16,5      | 17,7      | 22,4                               | 19,0      | 20,6      | 18,3      |
| Միս  | 7,2   | 8,2       | 10,1      | 11,8      | 2371                                      | 17,1  | 14,4      | 23,4      | 28,0      | 31,9                               | 26,6      | 29,3      | 28,9      |
| Ձուլ, մլն հատ                              | 32,6  | 37,8      | 42,2      | 40,1      | 1 հատը՝ 65 դրամ                           | 2,1   | 2,4       | 2,7       | 2,6       | 3,9                                | 4,4       | 3,4       | 2,7       |
| <b>Ընդամենը անասնաբուծության արտադրանք</b> |   |           |           |           |   | 31,2  | 27,1      | 42,6      | 48,3      | 58,3                               | 50,0      | 53,3      | 50,0      |
| Աճը, %                                     |   |           |           |           |   | 100   | 87        | 136       | 155       | x                                  | x         | x         | x         |
| Ընդամենը մարզում                           | <b>Գյուղատնտեսության համախառն արտադրանքը</b>        |           |           |           |   | 53,6  | 54,2      | 80,0      | 96,7      | 100                                | 100       | 100       | 100       |
|  | Աճը, %  |           |           |           |   | 100   | 101       | 149       | 180       | x                                  | x         | x         | x         |

Աղբյուրը՝ Պարենայի նապահովածությունը և աղքատությունը, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը տեղեկագրերի համապատասխան տարիների նյութերը: ՀՀ ԱՎԾ «Գյուղատնտեսության համախառն արտադրանքի հաշվարկման մեթոդաբանությունը»

Այլ է հացահատիկի դերակատարումը մարզի պարենային ապրանքների էներգետիկ կառուցվածքի առումով: Հացահատիկի համախառն բերքի էներգետիկան անցած տասը տարիներին ավելացել է 4,8 անգամ, հասնելով 339 մլրդ կկալի, սննդի էներգետիկայում՝ 45-ից հասնելով 67, այդ թվում բուսաբուծական արտադրանքի մեջ՝ 67-ից՝ 77 %-ի: Լինելով ՀՀ հացահատիկի արտադրության առաջատարը, Շիրակի մարզը 2013 և 2015 թթ. ապահովել է հացահատիկի էներգետիկ բարձր ինքնաբավություն և զգալի ռեսուրսներ է տրամադրել անասնաբուծության կերի բազային ու արտադրողական ապրանքաբաշխանառությանը: 2014 թ. մարզը իրացրել էր 45 հազ., 2015 թ.՝ 56 հազ. տոննա հացահատիկ:

Շիրակի մարզի հացահատիկային տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշների և հետագա ծրագրերի մասին անիմատ է խոսել առանց ՀՀ միջինացված ցուցանիշների հետ համադրելու, ուր պարենապահովվածության համեմատական բնութագրերը առավել ցայտուն են ընդգծված բերված թիվ 5 աղյուսակում:

Աղյուսակ 5

Պարենի մատչելիության և հացամթերքի դերակատարման համեմատական բնութագրերի մի քանի ցուցանիշներ ՀՀ-ում և Շիրակի մարզում

|   | Ցուցանիշներ   | Վայրը                                   | Չափման միավոր | 2002 | 2008 | 2014 |
|---|---|---|---------------|------|------|------|
| 1 | Անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսությունների (SS) մեկ շնչի հաշվով, տարեկան  | ՀՀ                                      | հազ.դրամ      | 144  | 346  | 489  |
|   |   | Շիրակ                                   |               | 119  | 303  | 406  |
|   | Մարզի   | տնտեսարար կշիռը ՀՀ-ի նկատմամբ           | %             | 82   | 88   | 83   |
|   |   | դիրքը մարզերի շարքում                   | տեղը          | 6    | 6    | 7    |
| 2 | SS-ների մեկ շնչի օրական ծախսը սննդամթերքի և ալկոհոլի վրա                            | ՀՀ                                      | դրամ          | 97   | 182  | 620  |
|   |   | Շիրակ                                   |               | 89   | 172  | 640  |
|   | Մարզի   | ՀՀ-ի նկատմամբ                           | %             | 92   | 94   | 101  |
|   |   | տեղը                                    | տեղը          | 6    | 7    | 6    |
| 3 | Սննդամթերքի ծախսերի տնտեսարար կշիռը անվանական ծախսերի մեջ                           | ՀՀ                                      | %             | 67   | 50   | 46   |
|   |   | Շիրակ                                   |               | 75   | 57   | 57   |
| 4 | Աղքատ բնակչության տնտեսարար կշիռը   | ՀՀ                                      | %             | 50   | 27   | 30   |
|   |   | Շիրակ                                   |               | 74   | 42   | 44   |
|   |   | Շիրակի մարզի զբաղեցրած տեղը մարզերի մեջ | տեղը          | 1    | 1    | 1    |
| 5 | Մեկ շնչի տարեկան սպառած սննդամթերքի էներգետիկան                                     | ՀՀ                                      | հազ.կկալ      | 670  | 811  | 745  |
|   |   | Շիրակ                                   |               | 585  | 801  | 744  |
|   | Մարզը   | ՀՀ-ի նկատմամբ                           | %             | 87   | 99   | 99   |
|   |   | տեղը                                    | տեղը          | 8    | 6    | 6    |
| 6 | Սննդակարգում 70%-ից ավելի հացամթերքին և կարտոֆիլին ապավինած բնակչության մասնաբաժինը | ՀՀ                                      | %             | 49   | 17   | 15   |
|   |   | Շիրակ                                   |               | 60   | 27   | 23   |
| 7 | Սպառած սննդամթերքի 1000 կկալ -ի արժեքը  | ՀՀ                                      | դրամ          | 145  | 224  | 303  |
|   |   | Շիրակ                                   |               | 152  | 215  | 314  |

|                     |  |   |     |    |     |
|---------------------|--|---|-----|----|-----|
| Մարզը ՀՀ-ի նկատմամբ |  | % | 105 | 96 | 104 |
|---------------------|--|---|-----|----|-----|

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿՃ: Պարենային ապահովության ու և աղքատության ուն. – Եր. 2005, էջ 43-49, 2010 թ. էջ 87-91, 103-105, 2016 թ. էջ 90-91, 95-96, 108-110

ՀՀ մակրոտնտեսական միջին ցուցանիշների հետժիրակի մարզի տվյալների համադրումը առավել իրատեսորեն է բնութագրում մարզի տնտեսական իրավիճակը և տնտեսական դժվարին կացության մեջ հայտնված մարզի բնակչությանը մատչելի և լիարժեք պարենի՝ հացահատիկի ինքնաբավության ապահովման հիմնավորումները: Սակայն, ինտենսիվ մշակաբույսերի (կարտոֆիլ, կաղամբ, գազար, շաքար և սեղանի ճակնդեղ, կտավատ) արտադրության ավելացումը այլ ընտրանք չունի:

Հացահատիկի տարածությունների, բերքատվության կարգավորման ասպարեզում ձեռքբերումները վերջնական չեն: Կարգավորման կարիք ունի հացահատիկի ցանքատարածությունների կառուցվածքի օպտիմալացումը, թեև դրա հնարավորությունները շատ սուղ են առանձին տարածաշրջաններում, իսկ Արարատի, Արմավիրի, Տավուշի, Լոռու մարզերում կարևոր է հատիկի եգիպտացորենի, հաճարի մշակման ընդլայնումը:

ՀՀ և ժիրակի մարզի հացահատիկի արտադրության 2020-2025 թթ. ծրագրի իրականացումը առենախոսական աշխատանքում քննարկված է ամբողջական պահանջարկի և առաջարկի հաշվեկշռվածության, առանձին տարածաշրջանների բնառեսուրսային ներուժի առկայություն և որակաչափերի՝ հացահատիկի արտադրության մեջ ներառելու հնարավորությունների և նպատակահարմարության համառոտ քննարկում: Ըստ այդ ծրագրի հացահատիկի տարածությունները ՀՀ-ում կկազմեն համապատասխանաբար՝ 219 և 225 հազ. հա: 2015 թ. համախառն բերքի 638 հազ. տ-ի և 32 ց բերքատվության ցուցանիշները երաշխիք են տասնամյակի ընթացքում միջին տարեկան բերքը 16 հազ. տ-ով ավելացնելու և 2025 թ. 799 հազ. տոննայի հասցնելու համար:

ժիրակի մարզում 2020-2025 թթ. հեռանկարային ծրագրի համապատասխան հացահատիկի տարածությունները կկազմեն՝ 42,5 և 43,6 հազ. հա, բերքատվության 2014 թ. 29,6 ց ցուցանիշի համեմատ 5,8-7,0 ց-ով աճի պարագայում համախառն բերքը կկազմի համապատասխանաբար՝ 150 և 160 հազ. տ:

**Առենախոսության երրորդ՝ «Հացահատիկի արտադրության տնտեսական արդյունավետության հիմնախնդիրներն ու լուծման ուղիները ՀՀ ժիրակի մարզում» գլխում** մարզի հացահատիկացան գյուղացիական տնտեսությունների փաստացի նյութերի վիճակագրական վերլուծություններով, ազդող գործոնների ծանրակշռության գնահատմամբ, ներկայացվել են առաջարկություններ 2020 և 2025 թթ. ծրագրերի իրականացման համար:

Արդյունավետության ավանդական ցուցանիշներից զատ ներառվել են շուկայական տնտեսությանը բնորոշ նորերը, որոնք հացահատիկի վերաբերյալ հետազոտություններում հավուր

պատշաճի չեն լուսաբանվել: Դրանք ներկայացված են՝ կարճաժամկետ ընթացիկ նյութական (առարկայացած աշխատանքի) և կենդանի աշխատանքի նոր արդյունքի վրա ներգործման նորովի մեկնաբանությամբ ներկայացված, քանզի արտադրանքի արժեքի մեջ առարկայացած աշխատանքի մասնաբաժնի աճը հղի է նոր արդյունքի տեսակարար կշռի փոքրացման վտանգով: Ատենախոսության մեջ դրանք ներկայացված են «**արտադրանքի նյութականացում**», նոր արդյունքի «**նյութատարողություն**» հոմանիշներով:

Ընդհանուր ծախսերի մեջ նյութական ծախսերի և վարձատրության համաչափ փոփոխության պարագայում ինքնարժեքի, շահութաբերության, աշխատանքի արտադրողականության մակարդակի փոփոխությունն չի առաջանում, մինչդեռ այն առկա է նոր արդյունքով տնտեսական արդյունավետության դինամիկայի հաշվարկման դեպքում:

Չացահատիկացան գյուղացիական տնտեսություններում հացահատիկի արդյունավետությունը ներկայումս գնահատվում է ոչ այնքան ապրանքային արտադրանքի, դրամական միջոցների, նոր արդյունքի մուտքերի և արդյունավետության առումով (միայն խոշոր ապրանքային տնտեսություններում դա է առաջնահերթը), որքան ընտանիքի 1 շնչի հաշվով շուրջ 200 կգ պարենային հացահատիկ և հնարավորինս՝ անասնակեր, լավորակ սերմ ունենալու պայմանի առաջնահերթության սկզբունքով:

2014 թ. ՉՉ գյուղացիական տնտեսություններին կողմից իրացվել էր արտադրված հացահատիկի միայն 34,8, իսկ Շիրակի մարզում՝ 37,2%-ը կամ շուրջ 205 և 45 հազ. տ, գյուղացիական մեկ տնտեսությունը բերելով 107 և 214 հազար դրամ հասույթ, որի տեսակարար կշռը դրամական եկամուտների մեջ հասնում էր ընդամենը 7,5, Շիրակի մարզում՝ 13,3%-ի<sup>13</sup>:

Այստեղ կարևորում է տնտեսական հարաբերությունների այնպիսի փաթեթ, որը կներառեր հացահատիկի արտադրություն, գնումների, վերամշակման, հացամթերքների վաճառքի մասնակիցների շահերի ներդրումակալությունը, ինչպես նաև՝ հացահատիկի և գյուղին վաճառվող տեխնիկական միջոցների, պարարտանյութերի, վառելիքի, բուժանյութերի, սերմերի, ոռոգման ջրի, ծառայությունների գների համարժեքության սահմանում:

Չացահատիկի արտադրության արդյունավետությունը գնահատվում է նաև, ելնելով արտակարգ իրավիճակներում վարելահողի օգտագործման գործակցի մեծացման հնարավորությունների և պարենային անվտանգության սպառնալիքների հնարավոր մեղմացման դիրքերից, այսինքն հացահատիկի արդյունավետությունը դիտարկվում է ցածր բերրի

<sup>13</sup> Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսություններին կողմից 2001-2015 թթ. «Գյուղ.մթերքի ապրանքայինության մակարդակը» և «Չացահատիկային մշակաբույսերի իրացումը: Բաժինները

հողերի շրջանառության մեջ դնելու սուբսիդավորման շահեկանության հիմնավորման և խթանման մեխանիզմների առաջարկման, հացահատիկի արտադրությանը պետական հոգածության գերակայության հռչակելու, ինվեստիցիաների սառեցվածության լազի կարճատևության տեսանկյունով:

Հացահատիկի տնտեսական արդյունավետության գնահատման համար կարևոր են գործող մեծածախ և մանրածախ գները, դրանց հարաբերակցության արդարացիության գնահատման համար:

Սակայն խնդիրը բարդանում է գյուղացիական տնտեսության ներում արտադրական ծախսերի հաշվառման առումով: Այնուհանդերձ, հանրապետության հացահատիկացան առաջատար Շիրակի մարզի գյուղացիական 100 տնտեսության ներքին հարցման տվյալներով հաշվարկվել է հացահատիկի արտադրության տնտեսական արդյունավետությունը: Արդյունավետությունը ներկայացվել է.

1. հացահատիկի արտադրության 1 հա-ի, 1 ց-ի վրա կատարված ծախսերի, դրանց կազմի ու կառուցվածքի գնահատումների,

2. արդյունավետության վրա առանձին գործոնների ներգործության աստիճանով: Ըստ որոնց պարզվում է, որ մեկ հա-ի հաշվով ջրովի և անջրդի տարածքներում արտադրական ծախսերը հասնում են 297 և 149 հազար, 1 ց ինքնարժեքը՝ 6891 և 8563, իսկ լրացուցիչ 25,7 ց բերքի 1 ց-ի ինքնարժեքը՝ 5758 դրամի [(297-149):29,7]:

Սակայն «ջրովի» հասկացողությունը ևս հարաբերական է, քանի որ անհայտ է օգտագործված ջրի ծավալը: Ուստի աշխատանքում օգտագործվել է «ջրումների թվ» հասկացողությունը:

Ոռոգման բարձր արդյունավետությունը հաստատված է նաև ոռոգման համար կատարված ծախսերի արդյունավետության վերաբերյալ խմբավորման տվյալներով, ուր 1-3 ջրումների պարագայում բերքատվությունը անջրդիի նկատմամբ բարձրանում է 58, 94 և 154 %-ով: Թեև ջրումների թվի ավելացման հետագա խմբերում ինչ-որ չափով նկատվում է «նվազող հատույցի» դրսևորման երևույթը, սակայն ոռոգման առաջին խմբի նկատմամբ լրացուցիչ զուտեկամուտը հետագա խմբերում աճում է 41 և 161 հազ. դրամով կամ 33 և 130 %-ով:

Արտադրության արդյունավետության բարձրացման գործոնների շարքում վճռական դերը պատկանում է բերքատվության մակարդակի բարձրացմանը:

Խմբավորումները ներկայացված են 1 հա-ի վրա լրացուցիչ ծախսերի, քիմիացման, ոռոգման, բարձրորակ սերմերի օգտագործման արդյունավետության բացահայտման օրինաչափություններով և եզրահանգումներով:



Հացահատիկի արտադրության տնտեսական արդյունավետության ռոնդ  
 ծիրակի մարզում  
 (գյուղացիական 100 տնտեսության ռոնդների հարցման արդյունքներով  
 2012 թ.)

|   | Ցուցանիշներ   | Չափի միավորը | Ջրովի | Անջրդի |
|---|---|--------------|-------|--------|
| 1 | Հացահատիկի տարածությունը  | հա           | 1     | 1      |
| 2 | Հատիկի բերքը  | ց            | 43,1  | 17,4   |
| 3 | Համախառն արտադրանքը   | հազ.դրամ     | 653   | 261    |
| 4 | Ընդամենը ծախսումներ   | - ,, -       | 297   | 149    |
|   | որից նյութական  | - ,, -       | 184   | 114    |
| 5 | Համախառն եկամուտ  | - ,, -       | 469   | 147    |
| 6 | Չուտեկամուտ   | - ,, -       | 356   | 112    |
| 7 | Եկամտաբերության մակարդակը   | %            | 120   | 75     |
| 8 | Համախառն եկամուտը`  |              |       |        |
|   | ա) 100 դրամ աշխատավարձի հաշվով                                      | դրամ         | 415   | 420    |
|   | բ) 100 դրամ նյութական ծախսերի հաշվով                                | - ,, -       | 255   | 129    |
|   | գ) մեկ մարդ-օրվա հաշվով   | հազ.դրամ     | 26,0  | 32,6   |
|   | Համախառն եկամտի տնտեսական արդյունավետության համախառն արտադրանքի մեջ | %            | 71,8  | 56,3   |
| 9 | Մեկ հաի բերքով (առանց սերմի) կերակրվողների թիվը (կենս.նորմայով)     | մարդ         | 31    | 11     |

Աղբյուրը` Հայկական, Այգաբաց, Արևիկ, Ղարիբջանյան, Ոսկեհասկ համայնքների գյուղացիական 100 տնտեսության ռոնդների հարցման նյութերով:

Մեկ հեկտարի վրա արտադրական ծախսերի կրկնապատկման պարագայում բերքատվությունը բարձրանում է 25,7 ց-ով կամ 2,5 անգամ, 1 ց-ի ինքնարժեքը իջնում է 1672 դրամով կամ 19,5 %-ով, զուտ եկամուտը մեկ հեկտարից ավելանում է 244 հազ. դրամով, կամ 3,2 անգամ, իսկ եկամտաբերության մակարդակը բարձրանում է 45 %-ով: Թեև խմբավորման հիմքում դրվել է բերքատվության մակարդակը, իրականում այն ևս արդյունքային ցուցանիշ է և հանդիսանում է այլ գործոնների միագումար ներգործության հետևանք, որը հաստատվում է հացահատիկի արտադրության ինտենսիվության մակարդակի վերաբերյալ խմբավորման տվյալներով: Մեկ հաի վրա կատարված ծախսերում արտացոլված է արտադրության համակողմանի

ի ն տ Ե ն ս ի վ ա ց մ ա ն      մ ա կ ա ր դ ա կ ի      և      ա ր դ յ ո ւ ւ ա վ Ե տ ո ւ Լ թ յ ա ն      Կ ա պ ը  
(ա ղ յ ո ւ ս ա կ 7):

Հացահատիկի արտադրության ինտենսիվացման տնտեսական արդյունավետությանը ճիշակի մարզի Այգաբաց, Հայկական, Ախուրյան, Արևիկ, Ղարիբջանյան համայնքների գյուղացիական տնտեսություններում (2012 թ.)

| Տնտեսությունների խմբերը ըստ մեկ հափվրակատարած ծախսերի, հազ.դրամ | Տնտեսությունների |                      | Հացահատիկի                    |              |                   |                   |                          |                  |                               |        |                         |          |                               |
|---|------------------|----------------------|-------------------------------|--------------|-------------------|-------------------|--------------------------|------------------|-------------------------------|--------|-------------------------|----------|-------------------------------|
|   | ժիվը             | տնտեսակարար կշիռը, % | արտադրական ծախսերը, հազ. դրամ |              | տարածությունը, հա | համախառն բերքը, ց | 1 հափ բերքատվությունը, ց | 1 ց-ի հնքնարժեքը | համախառն արտադրանքը, հազ.դրամ |        | գուտեկամուտը, հազ. դրամ |          | եկամտաբերություն մակարդակը, % |
|   |                  |                      | ընդամենը                      | 1 հափ հաշվով |                   |                   |                          |                  | ընդամենը                      | 1 հափց | ընդամենը                | մեկ հափց |                               |
| Մինչև 80  | 18               | 18,4                 | 2932                          | 78,2         | 37,5              | 330,0             | 8,8                      | 8886             | 5280                          | 140,8  | 2348                    | 62,6     | 80                            |
| 80-150  | 54               | 55,0                 | 4179                          | 148,2        | 28,2              | 460,0             | 16,3                     | 9085             | 7360                          | 261,0  | 3181                    | 112,8    | 76                            |
| 150-200   | 15               | 15,3                 | 7027                          | 195,2        | 36,0              | 890               | 24,7                     | 7903             | 14240                         | 374,7  | 7213                    | 179,5    | 103                           |
| 200-ից ավելի  | 11               | 11,3                 | 20217                         | 306,8        | 65,9              | 2461              | 37,3                     | 8224             | 39376                         | 597,5  | 19159                   | 290,7    | 95                            |
| Ընդամենը, միջինը  | 98               | 100                  | 34355                         | 204,9        | 167,6             | 4141              | 24,7                     | 8296             | 66256                         | 395,3  | 31901                   | 190,3    | 93                            |

Տվյալների հավաքագրումը կատարված է հացահատիկացան տնտեսությունների պատահական ընտրանքային եղանակով:

Մեկ հափ հաշվով արտադրական ծախսերի մեծության ցուցանիշը առավել լիարժեք է բնութագրում, ընթացիկ ծախսերի և արդյունավետության կապը եթե դրանցում ներառում են ոչ թե բոլոր, այլ միայն այն ծախսերը, որոնք ներկայացված են սերմի, պարարտանյութի, ոռոգման, մեքենաների մաշվածքի մեծությամբ: Սակայն միշտ էլ, որ աշխատանքի վարձատրությունը «էքստենսիվ» ցուցանիշ է: Ոռոգման 60 հազ. դրամ ծախսերի մեջ աշխատավարձը կազմում է 63 %:

Ուստի խմբավորման համար վերցված են ամբողջական ծախսերը:

Թեև սեղմագրում ներկայացված չեն ոռոգման, քիմիացման, սերմերի վերաբերյալ խմբավորումները, սակայն ծախսային ցուցանիշով ինտենսիվացման վերաբերյալ բերված խմբավորումը լրացնում է այդ բացը: Դա վերացնում է «նվազագույն ծախսերով առավելագույն արդյունք» ստանալու հասկացողության թյուրըմբռնումը, որտեղ «միավոր արտադրանքի վրա ծախսերի կրճատումը կամ ինքնարժեքի իջեցումը» նույնացվում է 1 հափ վրա ծախսերի կրճատման հետ: Մինչդեռ խմբավորման 7-րդ աղյուսակը հավաստում է, որ.

1. Հացահատիկի արտադրության ավելացման գլխավոր ուղին համակողմանի և հետևողական ինտենսիվացումն է,
2. Լրացուցիչ ներդրումների արդյունավետությունը բարձր է ներդրումների բոլոր մակարդակներում, քանի որ ելակետային մակարդակը շատ ցածր է,
3. Համախառն արտադրանքի մեջ հետագա ներդրումները չեն ուղեկցվում նոր արտադրանքի նվազմամբ,
4. Բոլոր տարբերակներում նկատվում է բերքատվության բարձրացում,
5. 1 հափ հաշվով ավելանում է զուտ եկամուտը, թեև հարաբերական ցուցանիշով այն փոքր-ինչ նվազում է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Հացահատիկի արտադրության զարգացումը և տնտեսական արդյունավետության բարձրացումը բխում է ՀՀ տնտեսական և պարենային անվտանգության ամրապնդման հիմնախնդիրների լուծման հրամայականից:

Թեև հացահատիկը մեկ հափից առավել բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերից չէ, սակայն, ժողովրդական տնտեսության մեջ ունեցած բացառիկ դերակատարմամբ այն, դեռևս, անփոխարինելի է:

**Հացահատիկը արտաքին առևտրի կարևոր հոդվածներից է:** 2003-2014 թթ. հացահատիկի ներմուծումների արժեքը 57-ից հասավ 180 մլն ԱՄՆ դոլարի: Պարենային ապրանքների ներկրումների մեջ նրա

տեսակարար կշիռը 31,5-ից 19,3 %-ի իջնելու պարագայում ներկրված պարենի էներգետիկայում այն 65-ից հասավ 75, բուսական ծագման սննդամթերքների՝ 92,7 %-ին: 1000 կկալ -ի արժեքով հացահատիկը 2013-2014 թթ. եռակի զիջում էր բուսական և 11 անգամ՝ կենդանական ծագման սննդամթերքներին:

**Հացահատիկը հումք է սննդի արդյունաբերության համար**, որից տարեկան պատրաստվում է շուրջ 0,5 մլն տալյուր, հաց և հացամթերք, համակցված կերեր:

Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում խաղացած բացառիկ դերակատարման նկատառումներով վերջին մի քանի տարիներին ՀՀ կառավարությունը էական աշխատանք է տարել հացահատիկի արտադրության սատարման բնագավառում (բարձրորակ սերմեր և պարարտանյութ տրամադրելու, ոռոգման ջրի գնի սուբսիդավորման, վնասների փոխհատուցման): Արդյունքում, 2014 թ. երկրում հավաքվեց 590, իսկ 2015 թ.՝ 638 հազ. տանախադեպարձրբերք:

Դրանով հանդերձ, հացահատիկի արտադրության ասպարեզում ձևավորվել են լուրջ մարտահրավերներ, որոնք ընդհանուր, միաժամանակ և՛ առանձնահատուկ են ըստ տարածաշրջանների:

ՀՀ հացահատիկացան առաջատար՝ Շիրակի մարզի օրինակով՝ բացահայտված է.

1. Արտադրության ինտենսիվության ցածր մակարդակի և բնական գործոնով պայմանավորված՝ մեծ են արտադրության տատանումները (216-ից մինչև 638 հազ.տ),

2. Ազգային ռեսուրսների ամենամյա ծավալների տատանումները էապես ազդում են պարենի արտաքին ապրանքաշրջանառության ծավալների, կազմի և կառուցվածքի, հացահատիկի շուկայի հաշվեկշռվածության, ինքնաբավության և հարկադրյալ ներկրումների վրա,

3. Թեև հացահատիկի արտադրության 1/4 և ապրանքային բերքի 1/3-ը կենտրոնացված է Շիրակի մարզում, սակայն նրա էկոնոմիկայի և շուկայի հիմնահարցերը, այն էլ՝ աղքատության ամենաբարձր շեմի պարագայում, հետազոտվում են առաջին անգամ,

4. Հետազոտություններով պարզված է, որ հացահատիկի արտադրության զարգացման գլխավոր ուղին եղել և մնում է բերքատվության բարձրացումը: Բերքատվության և արտադրության արդյունավետության կապն ուղղակի է: Բերքատվության, 1 հա-ից ստացվող նոր արդյունքի և շահութաբերության կոմբլյացիոն կապի գործակիցը 0,859, իսկ դետերմինացիայինը՝ 0,738 է,

5. Ուսումնասիրությունները հաստատում են հացահատիկային փոքր, տարանջատված տնտեսությունների անհեռանկարայնությունը: Չունենալով արտադրության, անգամ ընտանիք կերակրող անհրաժեշտ տարածքներ, արտադրության օպտիմալ չափ, բարեբեր հողերը մեծ ծախսումներով ինտենսիվ մշակաբույսերով զբաղեցնելու տնտեսական հնարավորություն,

գյուղացիական տնտեսությունները հաճախ են դիմում տնտեսապես չհիմնավորված այլ ընտրանքի, առավել ասես ինտենսիվ մշակության գոտիներում: Դրանով իսկ մեծ հարված հասցնելով ոչ միայն պարենապահովվածությանը, այլև հենց հացահատիկի հիմնախնդրի լուծմանը,

6. Հացահատիկի տնտեսական դերը Շիրակի մարզում էլ ավելի է կարևորվում նրանով, որ հանրապետության մարզերի շարքում այն ունի աղքատության ամենաբարձր (44,2 %) մակարդակը: Աղքատության գծի հաշվարկման հիմքում ընկած նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկման համար չափանիշ ընդունված օրական 2100 կկալ-ից պակաս սպառման մակարդակ ունի բնակչության 58 %-ը, բնակչության 1/4-ի սննդի կառուցվածքում էներգիայի գրեթե 70-ը % բաժին է ընկնում հացահատիկին և կարտոֆիլին:

ՀՀ հացահատիկի արտադրության 2015 թ. 638 հազ.տ ծավալը 2020 և 2025 թվականների համար նախատեսված 720 և 799 հազ. տ փաստացի մակարդակներին զիջում են 82 և 161 հազ. տ-ով կամ 12,8 և 25,2 %-ով: Սահմանված բնագծերի նվաճման համար կպահանջվի հացահատիկի միջին տարեկան արտադրանքը ավելացնել 16 հազ. տոննայով, 2014-2015 թթ.-ի 39 հազ. տ-ի դիմաց: Սակայն, դա ևս պահանջում է լրացուցիչ ջանք և միջոցներ:

Հետագոտության արդյունքներով հիմնավորվել և առաջարկվել է.

1. ՀՀ տնտեսական և պարենային անվտանգության ասպարեզում հացահատիկի և հացամթերային տնտեսության բացառիկ կարևորությունը պայմանավորված՝ հացամթերային ողջ համալիրը ազգային անվտանգության առաջնահերթություններում ներառելու անհրաժեշտությունը:

2. Համայնքային, մարզային կտրվածքով հացահատիկի հաշվեկշիռ հաշվարկելու անհրաժեշտությունը՝ ելնելով սպառման փաստացի ձևավորված մակարդակից, բնատնտեսական ներուժի լրիվ օգտագործման հնարավորությունից ու այլ ընտրանքի նպատակահարմարությունից:

3. Հացահատիկի արտադրության ինտենսիվացման վերաբերյալ խմբավորումների արդյունքներով առաջարկվում է հացահատիկի ներկրումների գումարի մի մասը ներկրում օգտագործել, քանզի դա շատ շահեկան է և՛ ներդրումների, և՛ տնտեսության անվտանգության առումով:

4. Հացահատիկի «արտադրություն և իրացում» շղթայի առանձին օղակների շահերի ներդաշնակեցման նպատակով առաջարկվել է գնագոյացման միասնական մեթոդաբանություն՝ հիմնված շահույթի միջին նորմայով առաջնորդվելու սկզբունքի վրա:

5. Հացահատիկի արտադրության խթանման նպատակով առաջարկվել է, որ պետությունը սահմանի ներկրման թույլատրելի ծավալներն ու կառուցվածքը:

Պահուստային պաշարների համալրման համար պետությունը պետք է առաջնահերթ կարգով հացահատիկը գնի ներքին արտադրողից:

6. Ինտենսիվ մշակության տարածաշրջաններում հացահատիկը աստիճանաբար փոխարինել շարահերկ մշակաբույսերով և բազմամյա տնկարկներով, իսկ հացահատիկով ապահովվածության հարցը լուծել առավելապես բանջարեղենի, կարտոֆիլի, պտուղների, խաղողի արտահանման ճանապարհով:

7. Գյուղացիական տնտեսություններին ժամանակին և առժամանակավատ խորհրդատվություն և տեղեկատվություն տրամադրելու, շուկայական կառույցներին ինտեգրվելու համար ստեղծել էլեկտրոնային (առցանց) շտեմարան՝ տվյալների հարուստ բազայով:

### **Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված հետևյալ հրապարակումներում.**

1. Նաջաֆի Ի., Գրիգորյան Ն.Կ. Investigatinig impact of Econommerce on the agriculture businesses. (Էլեկտրոնային առևտրի դերը գյուղատնտեսության ձեռնարկությունների գործունեության զարգացման գործում): - Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2012, 2 (14). - Էջ 227-235
2. Գրիգորյան Ն.Կ. Հացահատիկային տնտեսությունը որպես երկրի պարենային ապահովության հիմք: - Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2012, 4 (16). - Էջ 186-189
3. Գրիգորյան Ն.Կ. Հացահատիկի արտադրության զարգացման և շուկայի կարգավորման ուղիները ՀՀ-ում // Ագրոգիտություն, № 7-8, 2013. - Էջ 349-353
4. Գրիգորյան Ն.Կ. Հացահատիկային տնտեսությունը Շիրակի մարզում: Ձեռքբերումներ և հիմնախնդիրներ: - Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2013, 2 (18). - Էջ 169-174
5. Գրիգորյան Ն.Կ. Հացահատիկային տնտեսության տնտեսական արդյունավետությունը Շիրակի մարզում: Ցուցանիշների համակարգին ներկայացվող 21-րդ դարաշրջանի պահանջները: - Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2013, 3 (19). - Էջ 121-129
6. Գրիգորյան Ն.Կ., Սանասարյան Ա.Ա. The development trend of Food security in Armenia and in the World. (Պարենային անվտանգության զարգացման միտումներն աշխարհում և Հայաստանում). National Agrarian University of Armenia, № 3, 2014. - p. 109-112

## ГРИГОРЯН НАРЕК КАРЕНОВИЧ

### ПУТИ РАЗВИТИЯ И ПОВЫШЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ ПРОИЗВОДСТВА ЗЕРНА НА ПРИМЕРЕ ШИРАКСКОГО МАРЗА РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 – «Экономика и управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится 6 июля 2016 года в 10.00 часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

#### РЕЗЮМЕ

В основе решения продовольственной проблемы традиционно ставилось развитие производства зерновых. В условиях коренных преобразований экономических отношений, на рынке зерна были достигнуты значительные успехи, однако и для дальнейшего развития отрасли сформировались новые препятствия.

Наиболее весомыми из них являются: низкий уровень концентрации и централизации производства, разрушающийся технический парк, отсутствие научной системы ведения хозяйства, низкий уровень возможностей внедрения мировых научных достижений, несовершенство экономических рычагов перераспределения прибавочного продукта, недостаток информированности, низкий уровень ее доступности и достоверности, высокая степень зависимости от внешнего рынка и т.д. Предложение эффективных экономических механизмов решения перечисленных проблем обусловило актуальность и важность исследования.

Целью исследования явилось выявление препятствий, сформировавшихся в сфере производства зерновых, оценка их весомости, а также предложение механизмов их решения.

Приоритетными задачами исследования:

1. Выявление возможностей увеличения производства и его устойчивого развития, оценка ресурсного потенциала,
2. С точки зрения национальной безопасности и возможностей развития зернового хозяйства обоснование целесообразности альтернативы ввоза 400-450 тыс. т зерна на сумму 160-170 млн. дол. и производства его в республике,
3. В рамках предусмотренных на 2020 и 2025 гг. программ развития сельского хозяйства обоснование возможностей и эффективности вовлечения в зерновое производство части выведенной из сельскохозяйственного использования пашни,
4. Эквивалентность интересов всех звеньев в цепочке «производство-реализация» зерновых,
5. С точки зрения научной системы ведения отрасли обоснование целесообразности и эффективности инвестиций, требующихся для централизации и концентрации производства зерновых,
6. Обоснование необходимости внедрения новой финансово-экономической стратегии стимулирования землепользования и производства зерновых в горных, высокогорных и приграничных хозяйствах и т.д.

Объектом исследования является Ширакский марз РА, где сосредоточена 1/4 часть зернового хозяйства республики.

Информационной основой исследования явились научные труды отечественных и зарубежных ученых, материалы FAO, ЦСУ РА.

Основные результаты исследования и научная новизна диссертации заключаются в следующем:

1. Обоснована и предложена методология расчета самодостаточности зерновых по биологической норме или фактическому уровню потребления,

2. На примере хозяйств Ширакского марза выявлена объективная необходимость централизации и концентрации мелкотоварных зерновых хозяйств и их высокая экономическая эффективность,

3. С целью достижения эквивалентности интересов всех звеньев зернопродуктового подкомплекса предложены методология справедливого распределения совокупной прибыли и механизмы ее осуществления,

4. Посредством статистических группировок выявлена значимость факторов, влияющих на экономическую эффективность производства зерновых, дана оценка эквивалентного соотношения стоимостной регрессивной зависимости дополнительных затрат и дополнительных результатов.

Намеченный на 2020 и 2025 гг. уровень валового производства зерновых 720 и 799 тыс. т превысит показатель 2015 г. (638 тыс.т) соответственно на 12,8 и 25,2 %, что требует вовлечения дополнительных ресурсов.

Посредством сравнения и оценки природно-ресурсного потенциала Ширакского марза с остальными, выявлены целесообразность и возможности вовлечения неиспользованных земельных ресурсов для производства зерновых и приоритеты стратегической политики.

Для повышения экономической эффективности производства зерна предлагается:

1. В связи с исключительной важностью роли зернопродуктового хозяйства в экономической и продовольственной безопасности республики, включить весь зернопродуктовый комплекс в число обязательных государственных приоритетов национальной безопасности,

2. Исходя из сформировавшегося фактического уровня потребления, необходимости, возможности и целесообразности вовлечения природно-экономических ресурсов, рассчитывать баланс зерна в разрезе общины и марза,

3. По результатам статистических группировок относительно интенсификации производства зерновых предлагается их частичное импортозамещение, что выгодно как с точки зрения вложений, так и экономической безопасности,

4. Для обеспечения эквивалентности интересов всех звеньев цепочки «производство и реализация» зерна предлагается применение единой методологии ценообразования, основанной на принципе расчета средней нормы прибыли,

5. С целью стимулирования производства зерна установить государственные квоты на импорт зерна, структуру, цены. Для пополнения продовольственных запасов государство должно в первоочередном порядке закупать зерно у местных производителей.

6. В зонах интенсивного возделывания зерновые постепенно заменить пропашными культурами и многолетними насаждениями, а обеспеченность зерновыми решить главным образом за счет экспорта овощей, картофеля, плодовых, винограда.

7. Для получения крестьянскими хозяйствами достоверной и своевременной информации и расширения возможностей их выхода на рынок, создать единый электронный портал с богатой базой данных.

## **GRIGORYAN NAREK**

### **WAYS OF DEVELOPMENT AND BOOSTING ECONOMIC EFFICIENCY OF GRAIN PRODUCTION ON THE EXAMPLE OF RA SHIRAK MARZ**

**Dissertation in Ph.D. in Economic Sciences for the specialization 08.00.02 –  
“Economics and Management of Economy and Its Spheres”**

**The defence of the thesis will take place on July 6, 2016 at 10.00 o'clock at the session of Specialized Council 002 on Economics of Higher Attestation Commission of the Republic of Armenia in the National Agrarian University of Armenia, at the address of 74 Teryan str., Yerevan 0009**

#### **ABSTRACT**

The development of grain production has traditionally been in the basis of regulation of food issue for centuries. In case of radical transformations of economic relations significant achievements were reached in the grain market, but new obstacles were formed for further development of branch. The most serious among them are the low level of centralization and concentration of grain production, collapsing technical park, the absence of scientific system of farm management, the low level of implementation opportunities of the worldwide scientific achievements, inadequacy of the economic levers of redistribution of surplus product, lack of awareness, the low level of its availability and reliability, high level of dependence on the external market, etc. The offer of effective economic mechanisms to solve listed problems has conditioned the relevance and importance of this research.

The aim of the research is to reveal the obstacles formed in the field of grain productions, assessment of their stringency as well as offer of solution mechanisms.

The priority tasks of the research include:

1. The identification of opportunities for increasing grain production and its sustainable development, the evaluation of the resource potential;
2. The justification of the alternative of importing 400-500 thousand tons of grain costing 160-170 million USD or the expediency substantiation of producing grain in the country from the viewpoint of national security and opportunities of grain economy development;
3. The justification of the opportunities and rationale of involvement of the part of the abandoned arable lands into grain production within the framework of projects of increase in sowing areas and structural changes planned for 2020 and 2025;
4. The equivalence of the interests of all links in the “production-realization” chain of grain production;
5. The justification of expediency and efficiency of investments required for the centralization and concentration of grain production from the viewpoint of the management of scientific system of the sector;
6. The justification of the necessity of investing new financial and economic strategy enhancing land use and grain production in borderline, remote and highly mountainous farms, and so on.

The subject of the research was grain economy of RA Shirak marz where about 1-4 of total grain production is centralized.

The scientific heritage of Armenian and foreign researchers on grain economy, and the materials of FAO and RA NSS served as database for the research.

The main results of the work and scientific novelty are the following:

1. Methodology of calculating grain self-sufficiency not in the frame of market capacity structure but of living norms or factual consumption level has been justified and recommended;
2. The high economic efficiency and objective necessity of centralization and concentration of the production petty commodity grain farms has been revealed on the example of Shirak marz;
3. In order to achieve equivalence of the interests of all the links of grain products subcomplex proposed methodology for equitable distribution of comprehensive profit and the mechanisms for its implementation;
4. By means of statistical groups revealed the significance of factors influencing the economic efficiency of grain production, should be assessed the equivalence ration values regressive dependence of additional costs and additional results.

The rate of domestic product for 2020 and 2025 defined respectively by 720 and 799 thousands of ton grain will exceed the indicator of 2015 (638 thousands of ton) respectively by 12,8% and 25,2%, which will require contribution of additional resources.

The expediency and opportunities of using the unused land resources for grain production by comparison and evaluation of natural resource potential of Shirak marz with the others and by the assessment of equivalence and the priorities of strategic policy have been revealed.

In order to raise grain production efficiency the following suggestions have been made:

1. In connection with the exceptional importance of the role of grain products sector in the economic and food security of the country, include the entire complex of grain products in the number of mandatory of state national security priorities;
2. The necessity of calculating grain balance locally and at marz level taking into account the factual consumption level, opportunity and expediency of involvement of natural and economic resources;
3. According to the results of statistical groupings regarding the intensification of production of grain offered their partial import substitution that is beneficial both in terms of investment and economic security;
4. Single pricing methodology based on the principle of mean profit standard is suggested to equivalence the interests of individual links of the grain "production and selling" chain;
5. In order to promote grain production it is proposed that the state defines the allowable import volume, structure and prices. For replenishment food stocks the state in a matter of priority should buy grain from domestic producers;
6. In the areas of intensive cultivation of cereals gradually replace row crops and perennial plants, and provision of grain to solve mainly due to the export of vegetables, potatoes, fruit, grapes;
7. To create electronic portal with a rich database for obtaining accurate and timely information and expand their market access opportunities by peasant farms.

